ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԲԵՐՏ ՄԱՐԱՏԻ ԶՈՒՐԱԲՅԱՆ

ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՏՏ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Վարդուհի Ռոբերտի Պապոյան

Պաշտոնական Ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մելս Պարգևի Մկրտումյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գոռ Սուրենի Եսայան

Առաջատար կազմակերպություն՝ «Ուրարտու» գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2023թ. օգոստոսի 22-ին, ժամը 14:00–ին Երևանի Պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2023թ. հուլիսի 7-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դ. Ռ. Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականություն: Արդի պայմաններում աճող լարվածության, անձի անվտանգության և, ընդհանրապես, անվտանգության խնդիրը հասարակության մեջ որակապես նոր միջավայրում է դիտարկվում, քանի որ մարդիկ չեն կարողանում հարմարվել տեղեկատվական տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և հոգևոր փոփոխությունների բարձր և կյանքի որակի ցածր մակարդակին:

Հոգեբանական համատեքստում դիտարկելիս, անվտանգությունն ունի լայն ճյուղավորում, որտեղ մի կողմից գործունեության անվտանգությունն իր մեջ է միավորում աշխատանքային, կենցաղային, հանգստյան, շրջապատող բնական պայմաններ, որոնք անձի հնարավորությունների, անհատական և խմբային հետաքրքրությունների իրագործման միջոցների ամբողջություն են և կանխարգելում-չեզոքացնում են հասարակության վրա բացասական ազդեցությունը, իսկ մյուս կողմից մասնագիտական գործունեության անվտանգությունը, ինչը ենթադրում է ՏՏ ներմուծում աշխատանքային միջավայր, մարդ-մարդ, մարդ-տեխնիկա հարաբերություններ, դրդապատճառներ, հուզական լարվածություն, բավարարվածություն աշխատանքային միջավայրից, հոգեբանական բարեկեցություն և այլն:

Վերջին տարիների ճգնաժամային գնահատվող փոփոխությունները (Covid-19, պատերազմական վիճակ, հանպատրաստից անցում ՏՏ կիրառման, մասնագիտական գործունեության իրականացման պայմանների փոփոխություն և այլն) բարձրացնում են հոգեբանական անվտանգության նշանակալիությունը և կարևորությունը, որը մարդ-հասարակություն, մարդ-մարդ, մարդ-տեխնիկա հարաբերակցության ուղեծիր է: Հոգեբանական անվտանգությունը մի կողմից ապահովում է մարդու կենսագործունեության որոշակի պայմաններ և որոշում է ներքին զգացողությունները, իսկ մյուս կողմից՝ անձի վիճակները և բնութագրերը:

Ըստ այդմ, մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգությունը ներկայումս չափազանց արդիական և կարևոր է, հատկապես հաշվի առնելով համաշխարհային միտումները, որոնք հաճախ լուրջ մարտահրավերներ են ստեղծում անվտանգության ոլորտում: Այս մասին վկայում են խնդրին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունները, որոնք մատնանշում են առկա վիճակի նշանակությունը և բարդությունը:

Ուշադրություն դարձնելով բուն հոգեբանական մարտահրավերներին, ժամանակակից մասնագիտական գործունեությունը բնութագրվում է փոփոխությունների բարձր շարժունությամբ և անորոշությամբ, ինչը անձից պահանջում է բարձր մակարդակի կոմպետենտություն, հարմարվողականություն և անորոշ պայմաններում որոշումների կայացման ունակություն: Այնուամենայնիվ, մասնագիտական գործունեության ծավալման միջավայրը դառնում է սթրեսային վիճակների ձևավորման պատճառ, որոնք կարող են

բացասաբար ազդել մասնագիտական գործունեություն իրականացնող անձի մտավոր և ֆիզիկական առողջության վրա: Սթրեսային իրավիճակները հանգեցնում են սովորական ապրելակերպի փոփոխության, անորոշության և վերահսկողության կորստի զգացողության աճի, մարդկանց մեծամասնության մոտ շփոթության, որոնք իրենց հերթին առաջացնում են հուզական այրում, լարվածություն, հյուծվածություն:

Այս համատեքստում, դիտարկելով COVID-19 համավարակի հետ կապված խնդիրները, մասնագիտական գործունեության մի շարք ոլորտներ բախվել են աշխատանքի հեռահար ռեժիմի անցնելու անհրաժեշտությանը, ներառյալ կրթությունն ու SS արդյունաբերությունը: Օրինակ՝ ուսուցիչները ստիպված էին արագ հարմարվել առցանց ուսուցմանը, վերանայել իրենց ուսուցման մեթոդներն ու տեխնոլոգիաները՝ սովորողների համար կրթության բարձր որակը պահպանելու համար: Իսկ SS մասնագետների համար հեռահար աշխատանքն արդեն սովորական է դարձել, բայց, այնուամենայնիվ, ի հայտ են եկել նոր մարտահրավերներ՝ կապված հեռահար աշխատանքի ընթացքում տվյալների անվտանգության և կապի ապահովման անհրաժեշտության հետ:

Այս առումով, անհրաժեշտ է մշակել մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգության հայեցակարգային նոր մոտեցում, որը հաշվի կառնի նշված խնդրի բոլոր ասպեկտները, ներառյալ դրդապատճառների, արժեքային կողմնորոշումների ձևավորումը, հոգեբանական աջակցությունը, սթրեսային վիճակների կանխարգելումը և շտկումը, արտադրական միջավայրի կառավարումը և կայունության ապահովումը: Այս հիմնախնդիրները հիմնականում քննարկվում են մասնագիտական գործունեության հոգեբանության ոլորտում, որտեղ ուսումնասիրվում են դրա ձևավորման և զարգացման օրինաչափությունները, ինչը թույլ է տալիս որոշել հոգեբանական երևույթների միջև կապերն ու փոխկապակցվածությունները, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գործունեության առարկայի հոգեբանական անվտանգության հայեցակարգերի և դրույթների մշակման համար:

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել այն մասին, թե որ գործոններն են ազդում մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգության ձևավորման և զարգացման վրա, ինչ մեթոդներ և գործիքներ կարող են օգտագործվել աշխատանքային միջավայրում հոգեբանական անվտանգությունն ապահովելու համար և պատասխանել այն հարցին, թե ինչը կնպաստի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, առողջական խնդիրների առաջացման կանխարգելմանը, աշխատանքից աշխատողների բավարարվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության և արտադրանքի որակի բարձրացմանը:

Այլ կերպ ասած, մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգության խնդիրը ներկայումս ամենաարդիականներից և

կարևորներից մեկն է աշխատանքի հոգեբանության և մասնագիտական գործունեության գիտության և պրակտիկայի զարգացման համար:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման պարագայում անձի մասնագիտական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հոգեբանական նախադրյալները:

Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել և ընդհանրացնել հոգեբանական անվտանգության տեսական հիմքերը, բնորոշումները, սահմանումներն ու մեխանիզմները, դրանց անձնային, մասնագիտական և սոցիալական ասպեկտները:
2. Հետազոտել տեղեկատվական տեխնոլոգիաների՝ մասնագիտական գործունեությունում կիրառման և հոգեբանական անվտանգության ապահովման գործընթացում ունեցած դերակատարումը:
3. Բացահայտել դրդապատճառային, անձնային, հուզական ոլորտների դրսևորման այն առանձնահատկությունները, որոնք իրենց հնարավոր ազդեցությունն են ունենում մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգության ապահովման գործընթացի վրա:
4. Հետազոտել հոգեբանական այրման արտահայտվածությունը անձի մասնագիտական գործունեության պայմանների փոփոխման համատեքստում և դրանց կապը հոգեբանական անվտանգության ապահովման գործընթացի հետ:
5. Մշակել առաջարկություններ ՏՏ կիրառման պայմաններում աշխատանքային միջավայրի օպտիմալացման և հնարավոր բացասական հոգեբանական հետևանքները նվազագույնի հասցնելու, հարմարավետ ու անվտանգ աշխատանքային միջավայր ապահովելու համար:

Հետազոտության վարկած. Ենթադրվում է, որ անձի հոգեբանական անվտանգությունը պայմանավորված է մասնագիտական գործունեության բաղադրիչների կայունությամբ, ինչը փոփոխվում է ՏՏ կիրառման գործընթացի պայմաններում՝ ելնելով անձնային առանձնահատկություններից և դրդապատճառներից:

Ենթավարկած առաջին. Ենթադրվում է, որ դասականից առցանց պայմանների անցում կատարած կրթության ոլորտի և ՏՏ մասնագետի անձնային առանձնահատկությունների ու մասնագիտական գործունեության ներքին դրդապատճառների թույլ արտահայտվածությունը մեծացնում են հոգեբանական և հուզական այրման ձևավորման հավանականությունը:

Ենթավարկած երկրորդ. Ենթադրվում է, որ անձի անվտանգության տեսանկյունից աշխատանքային պայմանների դասականից առցանց անցումը բացասաբար է ազդում կրթության ոլորտի և ՏՏ մասնագետների հոգեբանական անվտանգության վիճակի վրա:

Հետազոտության օբյեկտն է անձի հոգեբանական անվտանգությունը, անձնային առանձնահատկությունները, դրդապատճառները և հուզական հյուծվածությունը:

Հետազոտության առարկան SS կիրառմամբ մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց հոգեբանական անվտանգության, անձնային առանձնահատկությունների, դրդապատճառների և հուզական այրման միջև փոխհարաբերությունների ուսումնասիրությունն է:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության մեթոդաբանական հիմք է կազմում գիտակցության և գործունեության միասնության սկզբունքը, որը մշակվել է Ս.Լ. Ռուբինշտեյնի փիլիսոփայական-հոգեբանական հայեցակարգի շրջանակներում, որում անվտանգությանն անդրադարձել են Ի.Ա. Բաևան, Մ.Ա. Կոտիկը, Կ.Ա. Աբոլխանովա-Սլավսկայան, Վ.Ե.Օրյոլը և այլոք:

Աշխատանքի մեթոդական հիմք ենք ընդունել նաև հումանիստական հոգեբանության դրույթները առ այն, որ անվտանգությունն անձի հիմնարար պահանջմունք է (Ա. Մասլոու (1987), Կ. Ռոջերս (1994), Ե.Պ. Իլյի (2002), Ա. Լեոնտև (1993)):

Հետազոտության համար հիմնարար է նաև հայ հոգեբանների կողմից մշակված մոտեցումը, որտեղ հոգեբանական անվտանգությունը դիտվում է որպես բարեկեցություն և կենսագործունեության ոլորտների ներդաշնակություն (Ռ. Աղուզումցյան, Վ. Պապոյան, Ա. Գալստյան և ուրիշներ (2006-2020)):

Հետազոտության համակազմը, իրականացման պայմանները և մեթոդները: Հետազոտության ընտրանքը կազմել ենք 20-35, 36-60, 61-75 տարիքային խմբերի մեջ ներառված 200 անձից, որոնցից 100-ը, մասնակի կամ ամբողջովին, իրենց գործունեությունը վարում են առցանց տարբերակով, իսկ մյուս մասը (100 անձ) մասնագիտական գործունեություն ծավալում են բացառապես անցանց տարբերակով: Ըստ այդմ, հաշվի առնելով մասնագիտական գործունեության ծավալման ոլորտները և պայմանները, հետազոտվողները բաժանվել են 4 խմբի՝ մանկավարժներ, որոնք վարում են դասական մասնագիտական գործունեություն կամ գործունեություն են իրականացնում հեռահար տարբերակով և SS ոլորտի մասնագետներ, որոնք կա՛մ աշխատում են գրասենյակային պայմաններում, կա՛մ հեռահար տարբերակով, ինչը հնարավոր է միայն լրացուցիչ գործիքակազմ կիրառելու դեպքում:

Աշխատանքի արդիականությունը պահպանելու նպատակով հետազոտությունը իրականացվել է երկու փուլով: **Առաջին փուլում** (2020թ. հունիս - 2021թ. հունիս) հետազոտության մեթոդիկաների փաթեթը և՛ տպագիր, և՛ թվայնացված տարբերակով տրամադրվեց այն ուսուցիչներին և SS ոլորտի մասնագետներին, որոնք մինչ այդ գործունեություն են ծավալել անմիջնորդ տարբերակով, այսինքն՝ գրասենյակային պայմաններում և ստիպված էին իրենց մասնագիտական գործառույթների իրականացումը տեղափոխել առցանց

միջավայր կամ ի սկզբանե աշխատում էին առցանց միջավայրում, իսկ **երկրորդ փուլում** (2021թ. մարտ – 2023թ. մարտ) արդեն համաճարակային սահմանափակումների մեղմացումից հետո նույն մեթոդիկաների փաթեթը և՛ տպագիր, և՛ թվայնացված տարբերակով տրամադրվել է այն մասնագետներին, որոնք վերադարձան գրասենյակային պայմաններում անմիջնորդ տարբերակով մասնագիտական գործառույթների իրականացմանը:

Հետազոտության էմպիրիկ հատվածում կիրառվել են Ա. Լոքյանի կողմից տեղայնացված Վ. Բոյկոյի «Հուզական այրման մակարդակի ախտորոշման», Ա. Ռեանի կողմից փոփոխված Կ. Զեմֆիրի «Մասնագիտական գործունեության դրդապատճառների ուսումնասիրման» մեթոդիկաները, Ա. Սերոբյանի և Ն. Խաչատրյանի կողմից տեղայնացված «Մեծ հնգյակ» հարցարանի կարճ տարբերակը, Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիայի անձնակազմի կողմից մշակված «Անձի անվտանգության բաղադրիչների գնահատման սանդղակը» և Ա. Ա. Ռուկավիշնիկովի կողմից մշակված «Հոգեկան այրման բացահայտման» մեթոդիկան:

Ստացված տվյալների վիճակագրական վերլուծությունն իրականացվել է ռանգավորման, գործոնային վերլուծության, համահարաբերկացական կապերի վերլուծության մեթոդների միջոցով, որոնք գործարկվել են SPSS 21 ծրագրային փաթեթով:

Պաշտպանության են դրվում հետևյալ դրույթները.

1. Ի տարբերություն կրթական ոլորտի մասնագետների, SS մասնագետների կողմից, ի սկզբանե, տեխնիկայի գործարկմամբ և բնույթով հիմնովին տարբեր գործունեության ծավալման նախապատրաստվածությունը, թույլ է տալիս հուզական տեսանկյունից ցուցաբերել բարձր ճկունություն և խուսափել հուզական այրման ազդեցությունից:
2. Անկախ մասնագիտական գործունեության իրականացման պայմաններից հոգեբանական այրումը արտահայտված է և՛ կրթական, և՛ SS ոլորտի մասնագետների շրջանում:
3. Մասնագիտական գործունեության իրականացման պայմաններում, անձի անհատական առանձնահատկություններից՝ նեյրոտիզմի, էքստրովերսիայի, լայնախոհության, բարյացակամության և բարեխղճության արտահայտվածությունն ունեն բացասական ազդեցություն աշխատակցի հոգեբանական անվտանգության վրա, որը բերում է հուզական այրման ձևավորման:
4. Մասնագիտական գործունեության պայմաններում ներքին դրդապատճառների թույլ արտահայտվածությունը ունի բացասական ազդեցություն աշխատակցի հոգեբանական անվտանգության վրա, որը բերում է հուզական այրման ձևավորման:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ անձի հոգեբանական անվտանգությունը դիտվում է որպես մասնագիտական գործունեության արդյունավետությունը ապահովող գործառույթ և ուսումնասիրվել

է անձնային, դրդապատճառային և հուզական ոլորտների համակցման տեսանկյունից: Ատենախոսության առանցքային ելակետն այն է, որ մասնագիտական գործունեության դասական տեսակից առցանց անցման պայմաններում անձի հոգեբանական անվտանգության ապահովման գործընթացը խաթարվում է հետևյալ դրույթներով՝

1. Ի սկզբանե SS մասնագետների կողմից տեխնիկայի գործարկման միջոցով գործունեության ծավալման նախապատրաստվածությունը զերծ է պահում, իսկ կրթության ոլորտի մասնագետի գործունեության իրականացման ոճի կայունությունը ճգնաժամային իրավիճակում հանգեցնում է և՛ մասնագիտական գործունեության, և՛ հոգեկան առողջության մակարդակում հուզական հյուծման առաջացման:
2. Դասականից անցում կատարած և հարկադրաբար առցանց գործունեություն ծավալող մասնագետի հոգեբանական անվտանգության ձևավորումը կապված է անհատական տիպաբանական առանձնահատկությունների, անձնային բնութագրերի, դրդապատճառային գործոնների, աշխատանքի բովանդակության, պայմանների և բնութագրերի հետ:

Տեսական նշանակություն: Աշխատանքում իրականացված տեսական վերլուծությունը հնարավորություն է տալիս ընդհանրացնել մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգությունը ձևավորող մի շարք նախադրյալներ, դիտարկել այդ նախադրյալների դրսևորումները մասնագիտական գործունեության իրականացման դասական պայմանների փոփոխման, տեղեկատվական տեխնոլոգիաների հանպատրաստից կիրառման անհրաժեշտության և դրա արդյունքում ձևավորվող իրավիճակային վտանգի և անվտանգության պայմանների համակարգում:

Ըստ այդմ, հետազոտության տեսական նշանակությունը կայանում է գործունեության դիտարկվող մոդելների համատեքստում մասնագետների լայն շրջանի կողմից իրականացվող պրակտիկ գործունեության և մասնագետի հոգեկան առողջության վրա ազդող գործոնների վերլուծությունների ընդհանրացման մեջ, ինչը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ ուսումնասիրել գործունեության առցանց իրականացման առանձնահատկությունները:

Գործնական նշանակություն: Աշխատանքում իրականացրած վերլուծությունը հնարավորություն է տալիս.

1. Կիրառել ստացված արդյունքները մասնագիտական գործունեության մեջ հանդիպող գործնական խնդիրների լուծման, գործունեության արդյունավետության բարձրացման, աշխատակիցների գործնական հմտությունների զարգացման և հոգեկան առողջության պահպանման կամ առողջ աշխատանքային միջավայրի ստեղծման համար:
2. ՀՀ-ում ընթացող տեղեկատվայնացման ակտիվ գործընթացների ֆոնին կիրառել դուրս բերված գործոնների ընդհանրացումն աշխատանքային

պայմանների ժամանակակից էրգոնոմիկ պահանջներին հարմարեցնելու, իսկ վերլուծության առանձին հատվածները կիրառվել աշխատանքային ֆորմալ միջավայրից դուրս գործունեություն իրականացնող մասնագետների աշխատանքային գոտու արդյունավետ ձևավորման համար:

3. Կիրառել աշխատանքի մեջ ներկայացված մոտեցումը աշխատակիցների հոգեբանական առողջության գնահատման, բացասաբար ազդող գործոնների դուրսբերման համար, ինչը հնարավորություն կընձեռնի պլանավորել աշխատակազմի ընտրության, բաշխման և անհրաժեշտ հմտությունների ձևավորման գործընթացը, մշակել ճգնաժամային իրավիճակում անվտանգ գործելու մոդել:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հուսալիությունը: Հետազոտության արդյունքների հուսալիությունը ապահովելու համար, առաջին հերթին, իրականացվել է ընտրված խնդրի նախնական ուսումնասիրություն, ինչը հնարավորություն է տվել դուրս բերել անձի մասնագիտական անվտանգության վրա ազդող հնարավոր գործոնները և ընտրել համապատասխան մեթոդներ դրանք ուսումնասիրելու համար: Կազմվել է հոգեբանական հետազոտությունների նկատմամբ ներկայացվող պահանջներին համապատասխան հետազոտության պլան և ընտրվել են մեթոդիկաներ, որոնք բազմակի կիրառվել են տեղի գիտական հետազոտություններում և ցուցաբերել են վալիդության բարձր ցուցանիշ: Ստացված արդյունքների վիճակագրական նշանակալիությունը ստուգելու համար կիրառվել է SPSS ծրագրային փաթեթը, որը հնարավորություն է տալիս իրականացնել բարձր ճշտության վերլուծություններ և դուրս բերել խմբերի միջև առկա նշանակալի տարբերությունները:

Աշխատանքի հրապարակայնություն: Իրականացնված հետազոտության ընթացքը և ստացված արդյունքները պարբերաբար քննարկվել են Երևանի պետական համալսարանի Ընդհանուր հոգեբանության ամբիոնի, «Հոգեբանության գիտահետազոտական կենտրոն»-ի նիստերում և գիտական քննարկումների ընթացքում: Ատենախոսության արդյունքները ներկայացվել են մի շարք գիտաժողովների ընթացքում, ապա տպագրվել են հոդվածների տեսքով:

Աշխատանքի ծավալը և կառուցվածք: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 142 էջ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության՝ «Անձի մասնագիտական անվտանգության հոգեբանական ուսումնասիրման տեսական հիմքեր»-ին վերաբերվող առաջին գլխում, որը բաղկացած է չորս ենթագլխից, իրականացվել է հոգեբանական անվտանգության բազմակողմանի դիտարկում մասնագիտական գործունեության հոգեբանական բաղադրիչների, բուն անձի, մասնագիտական և սոցիալ-

հոգեբանական համատեքստերում: **Առաջին գլխի առաջին ենթագլխում՝** «Մասնագիտական գործունեության հոգեբանական հիմնախնդիրները», դիտարկվում են «մասնագետ», «մասնագիտական գործունեություն» և «մասնագիտացում» հասկացությունները, քննարկվում են Վ. Դ. Շադրիկովի կողմից ընդհանրացված մասնագիտական գործունեության հոգեբանական ասպեկտները: **Երկրորդ ենթագլխում՝** «Հոգեբանական անվտանգությունը սոցիալ-հոգեբանական տեսանկյունից», ընդհանրացված ներկայացվում է անվտանգություն հասկացությունը, որին հետևում է երկրորդ հազարամյակում տեղի ունեցող լայնածավալ փոփոխությունների մատնանշումը, որոնք առաջանում են սոցիալական համակարգերի բարդության և անորոշության աճի պատճառով: Մեկնաբանվում են մի շարք հեղինակների մոտեցումներ (Ու. Բեկ, Վ. Հիդդենս, Ն. Լումանը և այլոք), որոնք Պոլիկարպովի մեկնաբանությամբ ընթացիկ ժամանակահատվածը դիտարկում են որպես մեգարիսկների ժամանակաշրջան, որտեղ քաղաքական իրավիճակը և սոցիալական խնդիրների ընդլայնումը հանգեցնում են նոր սպառնալիքների առաջացմանը: Այս համատեքստում, անձի սոցիալ-հոգեբանական անվտանգությունը պետք է հասկանալ որպես վիճակ, որը պայմանավորված է անձի և այլ մարդկանց միջև բավարարվածություն ենթադրող հարաբերություններով, ինչը հնարավորություն է տալիս իրագործել անձի հոգևոր-հոգեբանական պոտենցիալը և պահպանել իր ամբողջականությունը: Որպես վերջինիս հիմնական բաղադրիչներ առանձնացվում են՝ գործընկերներից և իրավիճակային պայմաններից բխող բացասական հոգեբանական ազդեցություններից պաշտպանվածության զգացողությունը, լարվածության, բարդությունների և հարաբերությունների մեջ խախտումների բացակայությունը, համագործակցության և հարաբերությունների հավասարակշիռ բաշխման բնույթը: **Երրորդ ենթագլխում՝** «Անձի հոգեբանական անվտանգության կառուցվածքը», առանձին-առանձին մեկնաբանվում են վստահության, ինքնավստահության, հավատի, ռեֆլեքսիայի, դրդապատճառների դերն անձի հոգեբանական անվտանգության ձևավորման համար: Ընդհանրացնելով այս գործոնները՝ բնահոգեբանական մակարդակում հոգեբանական անվտանգությունը դիտարկվում է որպես մարդու ֆիզիկական կառուցվածքի ամբողջականություն և միավորում է իր մեջ աշխարհի նկատմամբ արտացոլում և հարաբերությունների ադեկվատություն, հոգեկանի պաշտպանվածություն, գործելու հարմարվողականություն: Անձի մակարդակում առաջանում է սեփական անվտանգության - վտանգվածության նկատմամբ անհանգստության ասպեկտը: Այստեղ հոգեբանական վիճակը բնութագրվում է ներկայով բավարարվածությամբ և մի շարք այլ գործոններով, որոնց մասին ավելի մանրամասն խոսվել է:

Ըստ այդմ, կարելի է ասել, որ հոգեբանական անվտանգությունն անձի վիճակ է, որի միջոցով հնարավոր է բավարարել անվտանգության և բազային պահանջմունքները: **Չորրորդ ենթագլխում՝** «Մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգությունը», մասնագիտական

գործունեությունը ներկայացվում է բարդ, կառուցվածքավորված, բազմակողմանի երևույթ, որտեղ բավականին արդիական են տնտեսական, սոցիոլոգիական, հոգեբանական և էթիկական կողմերը: Վերոնշյալ բաղադրիչները ապահովում են մասնագիտական գործունեության լինելիության հարցը և դուրս են բերում մասնագետի վրա ազդող գործոնների լայն շարք, որոնք առաջ են բերում մարդու, անձի, մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգության սահմանման հարցը: Վերջինս դիտարկվում է մարդու անձնային բնութագրերի զարգացման տեսանկյունից, որոնք հանդիսանում են ձևավորման սուբյեկտիվ պայմանների, կենսագործունեության պայմանների զարգացման և հոգեբանական գործընթացների հոսքի արդյունք: Կիրառելով այս ամենն աշխատանքում դիտարկվող կրթության և ՏՏ ոլորտում գործունեություն իրականացնող մասնագետի հոգեբանական անվտանգության հարցի ուսումնասիրման գործընթացում հնարավոր դարձավ դուրս բերել, որ կրթության ոլորտի մասնագետի հոգեբանական անվտանգությունը պետք է դիտարկվի ոչ միայն աշխատանքային պայմանների, աշակերտների հետ առնչության, այլև վերջինիս պատկերացումների, ընկալման և մասնագիտացվածության համատեքստերում, իսկ ՏՏ ոլորտի աշխատակիցների դեպքում հոգեբանական անվտանգությունն ավելի շատ առնչվում է մասնագիտական ունակությունների և գիտելիքների արդիականացման գործընթացների հետ, որոնք էլ կանխորոշում են մասնագետի արդյունավետ գործունեությունը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** նվիրված է ՏՏ կիրառման պայմաններում անձի անհատական առանձնահատկությունների դրսևորմանը և վերջինիս մասնագիտական այրմանը և բաղկացած է հինգ ենթագլխերից: **Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝** «ՏՏ դերը մասնագիտական գործունեության մեջ», փորձ է արվել ընդհանրացնել և առարկայնորեն ներկայացնել, թե ինչ են իրենցից ներկայացնում տեղեկատվական տեխնոլոգիաները: Կարելի է հստակ ասել, որ կազմակերպության կամ անհատի տեղեկատվական կարիքների բավարարման տեսանկյունից այդ կատեգորիայի մեջ են մտնում համակարգչային տեխնիկայի օգտագործումը, ծրագրային ապահովման կիրառումը, կոմունիկացիայի և կապի ինտեգրումը: Ենթագլխում հակիրճ ներկայացվում են ՏՏ ներառման պայմաններում տեղեկատվական և կրթության ոլորտում գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությունները և առավելությունները: Վերոնշյալի հետ մեկտեղ, ենթագլխում խոսվում է ՏՏ մասնագետների մասնագիտական մոբիլության, մասնագիտական գործունեության նոր ոլորտների մասին: Ըստ այդմ, համեմատականներ տանելով կրթության ոլորտի և ՏՏ մասնագետի մասնագիտական գործունեության վրա ՏՏ ազդեցության արդյունքների միջև, կարելի է ասել, որ կրթական գործունեությունը, ինչպես և ՏՏ մասնագետի վարած գործունեությունն ունեն հակառակ բևեռայնությամբ արտահայտված խնդիրներ, այսինքն, եթե մի կողմից և՛ կրթության ոլորտի, և՛ ՏՏ մասնագետի աշխատանքը համարվում է ստեղծագործական բնույթ կրող, բայց

հստակ պահանջներ և կառուցվածքային միավոր ունեցող գործընթաց, ապա մյուս կողմից SS մասնագետն ի սկզբանե նախապատրաստված է եղել տեխնիկայի գործարկման միջոցով գործունեության իրականացմանը, մինչդեռ կրթության ոլորտի մասանգետների գործունեության ոճը վերջին դարաշրջանում չի փոփոխվել, ինչն էլ կտրուկ փոփոխությունների պայմաններում հանգեցնում է և՛ մասնագիտական գործունեության, և՛ հոգեկան առողջության մակարդակում բարդությունների առաջացման: **Երկրորդ ենթագլխում՝** «Անձի մասնագիտական գործունեության մեջ դրսևորվող և հոգեբանական անվտանգությունն ապահովող անձնային առանձնահատկությունները», նշվում է անձնային առանձնահատկությունների դերը մասնագիտական գործունեության իրականացման և մասնագետի ինքնադրսևորման գործում: Որպես այդպիսին անձնային առանձնահատկությունները մասնագիտական կրթության գլխավոր դետերմինանտներ են, քանի որ դրանք հաճախակի կապված են մասնագիտացման արագության և պատրաստվածության որակի հետ և հնարավորություն են ընձեռնում տարբերակել մասնագետներին: Ընդհանրացնելով ենթագլխում առաջ քաշվող տեսությունները և անձի մասնագիտական գործունեության մեջ դրսևորվող, անվտանգության վրա ազդող անձնային առանձնահատկությունները, և դրանք ավելի հստակ տարանջատելու համար մատնանշվում է հիմքային մոտեցման որդեգրման անհրաժեշտությունը, որտեղ անձնային առանձնահատկությունները ոչ թե կդիտարկվեն առանձին-առանձին, այլ կուսումնասիրվեն խմբավորված: Ըստ այդմ, ուսումնասիրելով Գ. Այզենկի, Գ. Օլպորտի և Գ. Օդբերտի կողմից առաջադրված, անձին նկարագրող մոտեցումները, ատենախոսության մեջ դիտարկվում են անձնային առանձնահատկություններ միավորող այնպիսի գործոններ, ինչպիսիք են նեյրոտիզմը, էքստրավերտությունը, լայնախոհությունը, բարյացակամությունը, բարեխղճությունը: **Երրորդ ենթագլխում՝** «Հոգեբանական անվտանգությունը որպես մասնագիտական գործունեության դրդապատճառ», մեծ ուշադրություն է սևեռվում մասնագիտական գործունեության իրականացման դրդապատճառների փոխկապակցվածությանը և անվտանգության խնդիրներին: Փորձ է արվել ներկայացնել մասնագիտական գործունեության և, ընդհանուր առմամբ, աշխատանքային գործունեության վտանգների ոչ միայն դրդապատճառային հիմքն ու դերը, այլ հիմք ընդունելով աշխատանքում ներկայացված մոտեցումները, նշել, որ բանիմաց մասնագետի կողմից յուրաքանչյուր գործունեություն անցնում է այսպես ասված «ընդունման» գործընթաց, որի ընթացքում այն դիտարկվում է պահանջմունքների բավարարման և անվտանգության դրդապատճառի տեսանկյունից: **Չորրորդ ենթագլխի՝** «Անձի հոգեբանական անվտանգության դրսևորումները իրավիճակային վտանգի և անվտանգության պայմաններում», **առաջին հատվածում** առանձնացվում են

հոգեբանական անվտանգությանը վնասող ռիսկային կամ վտանգավոր գործոնները, առանձնացվում են այրման բնույթը ներկայացնող և ուսումնասիրման ենթակա եզրույթները, ընդհանրացվում են այրման և վտանգի ու անվտանգության վիճակի նկարագրման տարբեր մոտեցումներ: Տվյալ ենթագլխի **երկրորդ հատվածում՝** «Մասնագիտական այրման դրսևորման առանձնահատկությունները», ներկայացված են այրման վերաբերյալ մի շարք հեղինակների մոտեցումներ, որոնք ուսումնասիրում են մասնագիտական գործունեության հուզական կողմը և այրման ազդեցությունը հուզական ոլորտի վրա: Այդ ամենի հետ մեկտեղ ներկայացված են հուզական այրման ձևավորման և զարգացման մի շարք մոտեցումներ, որոնց շարքին են դասվում ՝ տրանզակտ, ռեսուրսների և պահանջների անհավասարության, սպասումների անհամապատասխանության մոտեցումները: Տվյալ ենթագլխում ներկայացվում են նաև հուզական այրման կառուցվածքային բաղադրիչները և դրսևորման մակարդակները: Չնայած լայնամասշտաբ վերլուծությունների առկայությանը մասնագիտական այրման բնույթի դուրսբերումը բավականին հակասական հարց է, քանի որ թե՛ անհատական, թե՛ ներանձնային, թե՛ կազմակերպչական մոտեցումներն ուսումնասիրում են մասնագիտական այրման միայն մի կողմը և կենտրոնանում են միայն որոշակի խումբ գործոնների վրա, այսինքն՝ բացակայում է վերջինիս ընդհանրական մեկնաբանումը:

Ատենախոսության **երրորդ գլուխը,** որը բաղկացած է երեք ենթագլխերից, նվիրված է հետազոտության մեթոդաբանությանը, ռազմավարությանը, էմպիրիկ հետազոտության նկարագրությանը: Բերված է համալիր հետազոտության 2 փուլերի իրականացման ժամանակագրությունը, յուրաքանչյուր փուլի համառոտ բովանդակությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել է Ա. Լոքյանի կողմից տեղայնացված Վ. Վ. Բոյկոյի հուզական այրման համախտանիշի ախտորոշման մեթոդիկան, որը հնարավորություն է տալիս ախտորոշել հուզական այրման առաջատար ախտանիշները և պարզաբանել, թե սթրեսի զարգացման որ փուլին են իրենք վերաբերվում. լարվածության, դիմադրողականության, հյուծման: Մասնագիտական գործունեության արտաքին և ներքին դրդապատճառների ուսումնասիրման համար կիրառվել է Ս. Վ Հովհաննիսյանի կողմից տեղայնացված Ա. Ռեանի կողմից փոփոխված Կ. Զեմֆիռի «Մասնագիտական գործունեության դրդապատճառների ուսումնասիրման» մեթոդիկան: Կիրառվել են նաև Ա. Սերոբյանի և Ն. Խաչատրյանի կողմից կազմված և տեղայնացված «Մեծ հնգյակ» հարցարանի կարճ տարբերակը, Ա. Ա. Ռուկավիշնիկովի կողմից մշակված Հոգեկան այրման բացահայտման մեթոդիկան, որն ուղղված է հոգեկան այրման ինտեգրված ախտորոշմանը, ներառյալ անհատականության տարբեր ենթակառուցվածքներ և ԵՊՀ անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիայի կողմից մշակված անձի անվտանգության

բաղադրիչների գնահատման սանդղակը, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրել անձի կենսագործունեության կարևոր և նշանակալի այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են «ընտանիքը», «առողջությունը», «ընկերությունը», «աշխատանքը» և դիտարկել թվարկված կատեգորիաների առաջնահերթությունը:

Փորձարարական փուլերի արդյունքները մշակվել են խմբավորման, դասակարգման, համահարաբերակցական և վիճակագրական վերլուծության մեթոդներով: Հետազոտության տվյալները ներկայացված են աղյուսակների և գծապատկերների միջոցով՝ օգտագործելով գնահատման քանակական - թվային և դասակարգման ռեյտինգային սանդղակներ: Արդյունքների վերլուծությունն իրականացվել է մաթեմատիկական վիճակագրության թվային բնութագրիչների (միջին արժեք, նվազագույն, առավելագույն, մոդա, ասիմետրիա, ավելցուկ, Սպիրմենի ռանգային հարաբերակցության գործակց և գործոնային վերլուծություն) միջոցով: Աշխատանքի արդիականությունը պահպանելու նպատակով և առկա պայմաններից դրդված հետազոտությունն իրականացվել է երկու փուլով. Առաջին փուլն իրականացվել է 2020թ. հունիսից 2021թ. հունիսը ընկած ժամանակահատվածում, երբ մեթոդիկաների կազմված փաթեթը տպագիր և թվայնացված տարբերակով տրամադրվել է կրթական և SS ոլորտի այն մասնագետներին, որոնք մինչ այդ գործունեություն էին իրականացնում դասական տարբերակով, այսինքն՝ գրասենյակային պայմաններում և ստիպված էին իրենց մասնագիտական գործառույթների իրականացումը տեղափոխել առցանց միջավայր, կիրառել լրացուցիչ թվային գործիքակազմ կամ, ի սկզբանե, աշխատում էին առցանց միջավայրում, իսկ 2021թ. մարտից մինչև 2023թ. մարտը, արդեն համաճարակային սահմանափակումների մեղմացումից հետո, իրականացվել է հետազոտության երկրոդ փուլը և նույն մեթոդիկաների փաթեթը տպագիր կամ թվայնացված տարբերակով տրամադրվել այն մասնագետներին, որոնք վերադարձան գրասենյակային պայմաններում անմիջնորդ տարբերակով մասնագիտական գործառույթների իրականացմանը:

Կիրառված մեթոդիկաների արդյունքների սպեցիֆիկությունից ելնելով կրթական և SS ոլորտում դասական և առցանց գործունեություն իրականացնող մասնագետներից ստացված տվյալների վերլուծության առաջին փուլում դուրս են բերվել անձնային առանձնահատկությունների, մասնագիտական գործունեության իրականացման դրդապատճառային համակցությունների, հոգեբանական և հուզական այրումը ձևավորող գործոնների արտահայտվածության միջինացված արդյունքները, որոնք ենթարկվել են երկրորդային (գործոնների միջև համահարաբերակցական կապերի դուրսբերում) մշակման:

Ընդհանրացնելով և համեմատականներ տանելով նմանատիպ հետազոտությունների շրջանակներում ստացված արդյունքների հետ, պետք է, առաջին հերթին, առանձնացնել այն հանգամանքը, որ ԵՊՀ անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիայի անձնակազմի կողմից իրականացված հետազոտություններում մասնագիտական գործունեության իրականացման դրդապատճառները մանկավարժների մոտ կրում են արտաքին դրական բնույթ, ինչը կապվում է մեծ գումարներ վաստակելու, սոցիալական հեղինակության և մասնագիտական զարգացման նրանց ձգտումների հետ: Աշխատաշուկայում առկա իրավիճակն ուսումնասիրելով և համեմատականներ տանելով դասական և առցանց գործունեություն իրականացնող կրթության և ՏՏ ոլորտի մասնագետների շրջանում նմանատիպ պատկեր մեր կողմից ստացված ցուցանիշները ցույց են տալիս միայն դասական գործունեություն իրականացնող մասնագետների մոտ: Արդյունքները կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ՏՏ ոլորտի մասնագետները և առցանց գործունեություն իրականացնող մանկավարժները բավարարված են իրենց աշխատանքի բնույթով և արդյունքներով, քանի որ նրանք ինքնուրույն են դրսևորում իրենց ունակությունները: Հետաքրքիր համեմատականներ կարելի է տանել նաև հոգեբանական անվտանգության ապրման ցուցանիշների միջև, քանի որ Ռ. Վ. Աղուզումցյանի, Վ. Ռ. Պապոյանի, Ա. Ս. Գալստյանի, Ե. Բ. Մուրադյանի, Դ. Յու. Սարգսյանի կողմից իրականացված ուսումնասիրություններում հստակ ներկայացվում է այն հանգամանքը, որ մանկավարժների մոտ «Աշխատանք» կատեգորիան հոգեբանական անվտանգության տեսանկյունից ավելի է կարևորվում, քան «Ընտանիքը» և «Ընկերները»: Ընդհանրացնելով մեր ուսումնասիրությունները պարզ է դառնում, որ նման պատկեր առկա է միայն դասական պայմաններում աշխատող կրթական ոլորտի մասնագետների շրջանում, իսկ ընտրանքում ներառված հետազոտվողների մյուս խմբերի մոտ աշխատանքն առաջին եռյակի մեջ չի ներառվում: Սույն արդյունքները կարելի է բացատրել կրթական և ՏՏ ոլորտների մասնագետների բարձր լարվածության և գերծանրաբեռնվածության վիճակից ելնելով: Ինչ վերաբերվում է այրմանը, մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անկախ մասնագիտական գործունեության իրականացման պայմաններից, հոգեբանական այրումն արտահայտված է գրեթե բոլորի մոտ, իսկ հուզական այրումը հիմնականում չի անցել հյուծման փուլ: Ստացված արդյունքները մասամբ (այրումը հիմնականում արտահայտված է մանկավարժների մոտ) հակասում են ԵՊՀ անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիայի անձնակազմի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքներին, ինչը, մեր տեսանկյունից,

կարելի է բացատրել լարվածության և գերծանրաբեռնվածության պայմանների մեղմ արտահայտվածությամբ:

Վերոնշյալը նաև մասամբ հաստատում են ռուս հեղինակներ Ն. Ա. Ժուրավլյովան և Ե.Վ. Զարուբինան, որոնք կոլեկտիվ ուսումնասիրության ընթացքում նույնպես առանձնացրել էին լրավախության, վախի, գերծանրաբեռնվածության և մասնագիտական գործունեության պայմանների փոփոխման գործոնները: Դուրս բերված գործոնները դիտարկելով դրդապատճառների տեսանկյունից, կարելի է իրականացնել բաշխում ըստ դրդապատճառների բնույթի, ինչը ցույց է տալիս, որ Ն. Ա. Ժուռավլյովայի և Ե.Վ. Զարուբինայի առանձնացված գործոններից ֆինանսական խրախուսանքի բացակայությունը կարող է դիտարկվել որպես մասնագիտական գործունեության իրականացնման արտաքին դրդապտճառ:

Խոսելով անձնային առանձնահատկությունների մասին Թ. Վոսսը, Ու. Կլուսմանը և Ն. Բենկեն կոլեկտիվ լոնգիտյուդ հետազոտության մեջ հստակ նշում են, որ աշխատանքային պայմանների փոփոխման շրջանում բավականին նշանակալի է նոր փորձի նկատմամբ բաց լինելը: Մասնագետները, ովքեր ավելի բաց են, ճգնաժամային իրավիճակներում հավանաբար ավելի լավ են կարողանում գտնել նոր և ստեղծագործական լուծումներ: Մյուս կողմից էկստրովերսիայի արտահայտվածությունը, ընդհակառակը, մասնագետի հարմարման գործընթացում ունենում է բացասական ազդեցություն: Նրանց հետազոտությունը ցույց է տվել, որ համաճարակի ընթացքում սոցիալական ներգրավվածության անկումից հիմնականում տուժել են էքստրավերտները: Զուգահեռներ անց կացնելով մեր կողմից իրականացված հետազոտության հետ կարող ենք նշել, որ անկախ մասնագիտական գործունեության պայմաններից անձնային առանձնահատկություններն ազդում են մասնագետների մոտ այրման ձևավորման վրա:

Ըստ այդմ, հարկ ենք համարում նշել, որ համաճարակային և հետհամաճարակային շրջանում կենսագործունեության միջավայրը, անձնային առանձնահատկությունները և մոտիվացիոն գործոնները մասամբ ազդում են մասնագիտական գործունեություն իրականացնող անձի մոտ այրման համախտանիշի ձևավորման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգության ապահովման վրա ազդող գործոնների տեսական և էմպիրիկ ճանապարհով ստացված տվյալների վերլուծությանն անդրադառնալով եկել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Որպես գործառույթային բնույթ կրող երևույթ, կրթության ոլորտում գործունեություն իրականացնող անձի համար հոգեբանական

անվտանգությունը պետք է դիտարկվի ոչ միայն աշխատանքային պայմանների, աշակերտների հետ առնչության, այլև վերջինիս պատկերացումների, ընկալման և SS կիրառման մասնագիտացվածության համատեքստերում, իսկ SS ոլորտի աշխատակիցների դեպքում հոգեբանական անվտանգությունն ավելի շատ առնչվում է մասնագիտական ունակությունների և գիտելիքների արդիականացման գործընթացների հետ, որոնք էլ կանխորոշում են մասնագետի արդյունավետ գործունեությունը:

2. SS գործարկման ունակությունները և կրթականից բնույթով հիմնովին տարբեր գործունեության իրականացման նախապատրաստվածությունը SS մասնագետներին թույլ են տալիս հուզական տեսանկյունից ցուցաբերել բարձր ճկունություն և խուսափել հուզական այրման ազդեցությունից, մինչդեռ կտրուկ փոփոխությունների ֆոնի վրա մանկավարժի գործունեության ոճի պահպանողական բնույթը հանգեցնում է և՛ մասնագիտական գործունեության, և՛ հոգեկան առողջության մակարդակում բարդությունների առաջացման:
3. Դասական և առցանց պայմաններում գործունեություն իրականացնող կրթական և SS ոլորտների մասնագետների մասնագիտական գործունեության իրականացման դրդապատճառային, անձնային առանձնահատկությունների և հուզական հյուծվածության առանձին գործոնները դրսևորվում են «այրման» վիճակի առաջացման ընդհանուր և հատուկ օրինաչափություններում:
4. Հոգեբանական այրումը դրսևորվում է և՛ SS, և՛ կրթության ոլորտի մասնագետների շրջանում, անկախ մասնագիտական գործունեության իրականացման պայմաններից, ինչը ցույց է տալիս, որ այն հանդիսանում է գործոնների բարդ համակցության արդյունք:

Համահարաբերակցական կապերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ անկախ մասնագիտական գործունեության իրականացման պայմաններից, անձի հոգեբանական անվտանգությունը կարելի է ապահովել ներքին դրդապտճառների բարձր արտահայտվածության և անձնային առանձնահատկություններից նեյրոտիզմի ցածր, իսկ էքստորվերսիայի, լայնախոհության, բարյացակամության և բարեխղճության բարձր արտահայտվածության միջոցով, ինչին ենթադրաբար կարելի է հասնել աշխատակիցների կարիքների և աշխատանքային պայմանների գնահատման միջոցով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Վ. Պապոյան, Ա. Զուրաբյան - Անձի հոգեբանական անվտանգությունը աշխատանքային միջավայրի հարկադիր փոփոխման կոնտեքստում, Արդի հոգեբանություն,Երևան,2021, N1(8), էջ 90-99
2. А. М. Зурабян - Синдром профессионального выгорания в контексте удаленной рабочей среды сравнительный анализ, Ученые записки, 2021, № 2,DOI 10.54151/27382559-2021.2b-117, стр. 117-125
3. Ա. Մ. Զուրաբյան - Մանկավարժի անձի հոգեբանական անվտանգությունը պայմանավորող գործոնները մասնագիտական գործունեության մեջ, Գավառի պետական համալսարան գիտական հոդվածների ժողովածու, 2022, N13, DOI: 10.56246/18294480-2022.13-39, էջ 478-493
4. Ա. Մ. Զուրաբյան - Հոգեբանական անվտանգությունը որպես մասնագիտական գործունեության դրդապատճառ, Դպրատուն, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան, 1-(15)-2023, էջ 137-145
5. Ա. Մ. Զուրաբյան - Հուզական այրումը պայմանավորող գործոնների ուսումնասիրումը մասնագիտական գործունեությունում (SS ոլորտի աշխատակիցների օրինակով), Դպրատուն, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան, 1-(15)-2023, էջ 145-156
6. A. M. Zurabyan - Study of personal professional burnout and motivation in the conditions of remote professional activity, Modern Psychology Scientific Bulletin, 2023, 1(12), DOI: https://doi.org/10.46991/SBMP/2023.6.1.096, p. 96-106

Зурабян Альберт Маратович

ОБЕСПЕЧЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКИХ ПРЕДПОСЫЛОК ПРОФЕССИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ ЛИЧНОСТИ В УСЛОВИЯХ ПРИМЕНЕНИЯ ИТ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 - "Общая психология. Теория и история психологии. Психология личности".

Защита диссертации состоится 22 августа 2023 г., в 14:00 на заседании специализированного совета по психологии 067 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: 0025, ул. Абовяна 52а, Ереван,Армения.

РЕЗЮМЕ

Актуальность темы. Современные условия сопровождаются проблемами напряженности и безопасности, воздействующим и на личность и общество. Психологическая безопасность играет важную роль в создании благоприятной рабочей среды. В рамках психологического контекста, безопасность включает различные аспекты, от обеспечения условий жизнедеятельности и внутренних ощущений до состояний и характеристик личности.

Особенно актуальной становится психологическая безопасность субъекта профессиональной деятельности в условиях современных вызовов, таких как пандемия COVID-19 и переход на дистанционную работу. Современная профессиональная деятельность характеризуется высокой подвижностью и неопределенностью, требуя от личности высокой компетентности и адаптивности. Однако, рабочая среда может вызывать стрессовые состояния и отрицательное влияние на здоровье и благополучие.

Для обеспечения психологической безопасности личности, осуществляющей профессиональную деятельность, необходим новый концептуальный подход, который включает в себя формирование мотивов, ценностных ориентаций, психологическую поддержку, профилактику стресса и управление рабочей средой. Изучение психологии профессиональной деятельности помогает определить связи между психологическими явлениями и разработать положения психологической безопасности.

Исследование, представленное в данной работе, раскрывает факторы, влияющие на психологическую безопасность личности, осуществляющей профессиональную деятельность, и предлагает методы и средства для обеспечения безопасной рабочей среды. Результаты исследования способствуют повышению эффективности работы, улучшению здоровья и удовлетворенности работников, а также повышению производительности и качества продукции.

Цель работы изучить психологические предпосылки, необходимые для обеспечения профессиональной безопасности личности при использовании информационных технологий.

Задачи исследования.

1. Изучить и обобщить теоретические основы, определения и механизмы психологической безопасности, их личностные, профессиональные и социальные аспекты.
2. Изучить роль информационных технологий в профессиональной деятельности и обеспечении психологической безопасности.
3. Выявить особенности проявления мотивационной, личностной, эмоциональной сфер, оказывающие свое возможное влияние на процесс обеспечения психологической безопасности личности, осуществляющей профессиональную деятельность.
4. Исследовать выраженность психологического выгорания в контексте изменения условий профессиональной деятельности личности и их связь с процессом обеспечения психологической безопасности.
5. Разработать предложения по оптимизации рабочей среды в условиях применения ИТ и минимизации возможных негативных психологических последствий, обеспечению комфортной и безопасной рабочей среды.

Научная новизна.

1. Исследование фокусируется на роли психологической безопасности в профессиональной деятельности, рассматривая ее в контексте личностных, мотивационных и эмоциональных аспектов. Анализируется влияние перехода к онлайн-деятельности на обеспечение психологической безопасности.
2. Обучение ИТ-специалистов использованию техники предостерегает, а сохранение стиля работы специалиста образовательной сферы в кризисной ситуации вызывает эмоциональное истощение на профессиональном и психическом уровнях.
3. Формирование психологической безопасности специалиста, перешедшего от классической к онлайн-деятельности, связано с личностными особенностями, мотивационными факторами, содержанием и особенностями работы.

Теоретическое и практическое значение исследования. Анализ факторов, влияющих на психическое здоровье в контексте рассматриваемых моделей деятельности, позволяет эффективнее изучать особенности онлайн-деятельности.

Полученные результаты применимы для повышения эффективности, сохранения психического здоровья и формирования рабочей зоны специалистов. Подход к оценке психического здоровья поможет устранить негативные факторы и разработать модель безопасного функционирования в кризисной ситуации.

Объем и структура работы. Общий объем работы составляет 142 страницы. Он состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения.

Zurabyan Albert

PROVISION OF PSYCHOLOGICAL PREREQUISITES FOR PROFESSIONAL SAFETY OF A PERSON IN THE CONDITION OF USE OF IT

Dissertation thesis for the scientific degree of PhD in psychological sciences in speciality 19.00.01 - "General psychology, theory and history of psychology, psychology of personality".

The defence of the dissertation will be held on August 22, 2023, at 14:00 at the session of the Specialized Council 067 in Psychology of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia at Yerevan State University. Address: 0025, Yerevan, st. Abovyan 52a.

SUMMARY

The relevance of the topic. Modern conditions are accompanied by problems of tension and security, affecting both the individual and society. Psychological safety plays an important role in creating a favorable working environment. Within the framework of the psychological context, security includes various aspects, from ensuring the conditions of life and internal sensations to the states and characteristics of the individual.

The psychological safety of the subject of professional activity becomes especially relevant in the conditions of modern challenges, such as the COVID-19 pandemic and the transition to remote work. Modern professional activity is characterized by high mobility and uncertainty, requiring high competence and adaptability from the individual. However, the work environment can cause stressful conditions and a negative impact on health and well-being.

To ensure the psychological safety of a personality engaged in professional activity, a new conceptual approach is needed, which includes the formation of motives, value orientations, psychological support, stress prevention, and management of the work environment. The study of the psychology of professional activity helps to determine the connections between psychological phenomena and to develop the provisions of psychological security.

The research presented in this paper reveals the factors affecting the psychological safety of a personality engaged in professional activity and suggests methods and means to ensure a safe working environment. The results of the study contribute to improving work efficiency, improving the health and satisfaction of employees, as well as improving productivity and product quality.

The purpose of the work is to study the psychological prerequisites necessary to ensure the professional safety of the individual when using information technologies.

Research objectives.

1. To study and summarize the theoretical foundations, definitions, and mechanisms of psychological security, their personal, professional, and social aspects.

2. To study the role of information technology in professional activity and psychological security.
3. To identify the features of the manifestation of the motivational, personal, emotional sphere, which exert their possible influence on the process of ensuring the psychological security of a person engaged in professional activity.
4. To investigate the severity of psychological burnout in the context of changes in the conditions of professional activity of the individual and their relationship with the process of ensuring psychological security.
5. Develop proposals for optimizing the working environment in the conditions of using OT and minimizing possible negative psychological consequences, ensuring a comfortable and safe working environment.

Scientific novelty.

1. The research focuses on the role of psychological safety in professional activity, considering it in the context of personal, motivational, and emotional aspects. The influence of the transition to online activities on ensuring psychological safety is analyzed.
2. Training IT specialists in the use of technology warns, and maintaining the style of work of an educational specialist in a crisis situation causes emotional exhaustion at the professional and mental levels.
3. The formation of the psychological safety of a specialist who has switched from classical to online activities is associated with personal features, motivational factors, content, and features of work.

The theoretical and practical significance of the study. The analysis of factors affecting mental health in the context of the activity models under consideration makes it possible to study the features of online activities more effectively.

The results obtained are applicable to improve efficiency, preserve mental health, and form the working area of specialists. The approach to mental health assessment will help eliminate negative factors and develop a model of safe functioning in a crisis situation.

The scope and structure of the work. The total volume of the work is 142 pages. It consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, and an appendix.